

ԱՆԱՀԻՏ ՄԻՔԱՅՆԱՆ

«ՇԱՀՆԱՄԵՆ» ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Պարսիկ բանաստեղծ Աբուլ Հասիմ Ֆիրդուսու մեծածավալ էպիկական պոեմը՝ «Շահնամեն», պարսից ժողովրդի ազգային էպոսն է։ Այն կոչվում է Արքայագիրք, բանի որ պոեմում ներկայացված է Իրանի 50 շահերի թագավորության ժամանակագրությունը։ Պոեմն ընդգրկում է Իրանի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև արաբական նվաճումները։ Պոեմը բաղկացած է երեք մասից։ Առաջին մասում (դիցաբանական) ընդգրկված են իրանական հին լեգենդներն ու առասպելները, երկրորդը բովանդակում է դուրացական մասը, ընթերցողին ծանոթացնում իրանական դուրացազունների հետ, որոնք մարմնավորում են պարսից ժողովրդի ուժը, հզորությունը, լավագույն իդեալն ու ցանկությունները։ Երրորդ մասում պատկերված է Սասանյան դինաստիայի իշխանության ժամանակաշրջանը։ Այս հիմնական մասերն իրենց հերթին բաժանվում են դաստանների։ Սրանք ունեն ընդհանուր հերոսներ։ Պոեմում գործողությունների շարադրանքը երբեմն ընդհատվում է լիբիկական կամ փիլիսոփայական դեղումներով։ Հստ Ֆիրդուսու տրվել է չափերի, պոեմն ունի 60.600 բեյթ (երկտող)։ Մի շարժ գտնված ձեռագրերը պարունակում են 40.000—80.000 բեյթ, որը բացատրվում է գրիչների լրացումներով։ «Շահնամեն» գրված է մոթաքտրի կոշվող շափով, որը հիմնվում է երկար ու կարճ վանկերի հաջորդականության վրա։ Յուրաքանչյուր տող բաղկացած է 4 ոտքից և 11 վանկից։ Մոթաքարի շափը կարելի է արտահայտել հետևյալ սխեմայով՝ ս--/ս--/ս--/ս--։ Յուրաքանչյուր բեյթ ունի ինքնուրույն հանգավորում։

Մեծ է «Շահնամենի» որպես պարսից դասական գրականության հուշարձանի, թարգմանությունների նշանակությունը։

Գեղարվեստական դրականության յուրաքանչյուր արժեքավոր տեղագծագործություն, թարգմանությունների միջոցով, ներթափանցում է այլ դրականությունների մեջ, դառնում բազմաթիվ ժողովուրդների սեփականություն, հարստացնում համաշխարհային դրականության գանձարանը:

Հայ դրականության մեջ Սամվել Գյուլզադյանը առաջինը ձեռնարկում է եղավ «Շահնամին» որոշ հատվածների թարգմանությանը: Դրանք են՝ «Տիտոստամ և Սոհրաբ», «Զոհակ Բյուրասպի աժդահակ», «Միավուշ» և այլ փոքր հատվածներ: Թարգմանությունները կատարված են յամբական քառանգամ 15 վանկանի անապեստյան չափով ($4+4+4+3$), որը գրաբարից անցավ աշխարհաբարին և XIX դարում օգտագործվեց վիպական մեծ քերթվածքների թարգմանության համար (օրինակ՝ Թումանյանի թարգմանությունը՝ «Իլիականից», Ս. Գյուլզադյանցիներ՝ Ֆիրդուսու Շահ-Նամեից (Մ. Աբեղյան, Երկեր, հ. 5): Եվ իրոք, «Շահնամին» խորհրդային թարգմանիչներ Դեոդո Ասատուրը և Սերգեյ Ումառյանը անդրադառնալով պոեմի առանձին հատվածների թարգմանությանը, հանգեցին յամբական քառանգամ անապեստի հետ խառը 15 վանկանի մետրական համակարգին:

Մետրական այդ չափը հայ պոեզիայում առաջացրել է լեզվական որոշ անհարթություններ. հարց է ծագում՝ լավագույնն է այն արդյոք:

Ինչ խոսք, որն է բանաստեղծի ստեղծագործություն թարգմանելիս ցանկալի է պահպանել բնագրի չափը, հարազատ մնալ թարգմանվող լեզվին, նրա պոեզիայի ներքին օրենքներին: Եթե թարգմանվող լեզվի մետրը չի հնչում թարգմանող լեզվում, ապա պետք է ելնել տվյալ ժամանակաշրջանում, տվյալ ժողովրդին հարազատ, նրա կողմից ընդունված և հեշտ ընկալվող չափից (նկատի ունենալով նաև ժանրը):

Կարճ տողերի պոեզիայի դարում չպետք է գնալ Ֆիրդուսու երկար տողերի ուղիով: Այսօրվա բանաստեղծության տեսանկյունից «Շահնամին» 10 կամ 9 վանկով թարգմանելու դեպքում՝ պոեմն առավել համահնչուն կդառնա արդի պոեզիային: Իհարկե, եթե թարգմանի տաղանդը երկու դեպքում էլ նույն մակարդակի վրա է գտնվում, Ֆիրդուսու ժամանակակից Գրիգոր Նարեկացու «Մատնաճառ ողբերգության» մեջ գերակշռում է յամբ-անապեստյան երկ-

անդամ 10, հռանդամ 15 և քառանդամ 20 վանկանի ոտանավորը: Թարգմանիչ Մկրտիչ Խերանյանը հնարավորության սահմաններում պահպանել է այդ չափը: Տվյալ դեպքում հրկար տողը, անկասկած, «սագում» է նարեկացու փիլիսոփայական պոեմին, որի «զարգացման ընթացքը շատ բարդ է ու դժվար ընկալելի, բացի բուն բովանդակության ու պատկերավորման առանձնահատկություններից: Դրա պատճառներից մեկն այն է, որ նարեկացին բոլորովին չի օգտագործել պատմողական սյուժեի տարրեր» (Մ. Մկրյան. Գր. նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը):

Յուրաքանչյուր տողում պարփակված խոր և բարդ միտքը կարծես քողարկում է տողի հրկարությունը, ընթերցողին զգացնել չի տալիս 15 և 20 վանկերի ծանրությունը: Այլ է պատկերը, երբ գործունեներ էպիկական պոեմների հետ, որտեղ սրընթաց միմյանց հաջորդում են գործողությունները:

Իհարկե, չի կարելի թերագնահատել էպիկական ստեղծագործությունների փիլիսոփայական դրվագներն ու մտահանգումները, լիերիկական զեղումները: Այնուամենայնիվ այս ժանրի պոեմներում առաջնակարգ դերը պատկանում է բուն սյուժեի զարգացմանը:

XIX դարի վերջում Ս. Գյուլզադյանցը յամբական քառանդամ 15 վանկերի չափը մեկ անապետով մտցրեց հայ գրականության մեջ, որպես Ֆիրդուսու «Շահնամի» թարգմանության տաղաչափական համակարգ: Այն ընդունվեց իր ժամանակակիցների կողմից: Սակայն բազմաթիվ գրականագետներ ասել և ասում են, որ թարգմանությունները հնանում են: Հարկ կա՞, արդյոք, հետևել XIX դարում «Շահնամի» թարգմանությունների ընդունված չափին:

Թվում է, որ մեր ժամանակաշրջանում «Շահնամի» կատարվող թարգմանությունները պետք է հենվեն չափական այն ոտանավորի վրա, որով XX դարի հայ պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչները ստեղծեցին պոեմներ՝ հարազատ մնալով այսօրվա ընթերցողին:

Ռուս ընթերցողին «Շահնամեն» հայտնի դարձավ XIX դարի սկզբին, երբ օտար լեզուներից կատարվեցին նրա առաջին թարգմանությունները:

1849 թ. Ռուսաստանում լույս տեսավ Ֆիրդուսու «Ռոստամ և Սոհրաբը»՝ Վ. Ա. Ժուկովսկու թարգմանությամբ: Ծանոթ չլինելով պարսկերենին և հնարավորություն չունենալով օգտվել բնագրից,

Ժուկովսկին իր Թարգմանության համար հիմք էր ընտրել գերմանացի Բանաստեղծ, արևելագետ Ֆ. Ռյուքքերտի «Ռոստամ և Սոհրաբ» տեքստը։ Բնականաբար, պոեմի այս հատվածը, ենթարկվելով կրկնակի թարգմանության, շատ քիչ բան էր պահպանել բնագրից, առավել ևս, ինչպես նշում էր ինքը՝ Թարգմանիչը՝ «Իմ թարգմանությունը ոչ միայն ազատ է, այլև ինքնակամ, ես շատ բան դուրս եմ նետել և շատ բան ավելացրել»։

Թարգմանությունը կատարված էր արձակ բանաստեղծության ձևով, որը չէր կարող մատուցել բնագրի ուրիշ մեծ մեղեդին։ Ժուկովսկու «Ռոստամ և Սոհրաբը» ավելի ճիշտ նրա ուրույն ստեղծագործությունն է, քան՝ Թարգմանություն Ֆիրդուսուց, մի հանգամանք, որը բնորոշ է Ժուկովսկու բոլոր թարգմանություններին։

1934 թ. երևան եկան Մ. Լոդինսկու և Մ. Դյակոնովի թարգմանությունները (առանձին հատվածներ), որոնք օգտվել են անմիջապես բնագրից և փորձել հարազատ մնալ բնագրին՝ առանց հերթին՝ չափական համակարգի տեսանկյունից։ Որպես Թարգմանության չափ ընտրված է քառանգամ ամֆիբրաքստը, որը համապատասխանում է բնագրի չափական ոտանավորին։

Մանրամասն քննենք Յ. Բանու-Լահուցիի թարգմանությունը Այս հսկայածավալ աշխատանքն սկսվել է 1943 թ. և շարունակվում է առ այսօր։ Լահուցին ձեռնամուխ եղավ «Շահնամին» ոչ թե առանձին հատվածների, այլ՝ ամբողջ պոեմի (9 հատոր) թարգմանությանը։ Այս աշխատանքը կարելի է անվանել ակադեմիական՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թարգմանիչը ամբողջությամբ հարազատ է մնացել բնագրի շարադրանքին և՛ մետրական չափի և՛ բովանդակության առումով։ Թարգմանությունը հիմնվում է քառանգամ ամֆիբրաքստի և պոեմի ա, ե, ե, հանգավորման վրա։

Թեմայից շեղվելով պետք է նշել, որ գեղարվեստական գրականությունը քննարկելիս ու գնահատելիս միշտ առկա է սուբյեկտիվ կողմը՝ նույնիսկ ստեղծագործության նկատմամբ հայեցակետի հստակ պարզարանման դեպքում։ Բանասեր-գրականագետը նույնպես ընթերցող է, և նրա սուբյեկտիվ վերաբերմունքն ընթերցանության ժամանակ առաջանում է ինքնաբերաբար։

Խոսելով Լահուցիի աշխատանքի մասին, պետք է նշել, որ թարգմանությունը դժվար է ընկալվում ընթերցողի կողմից։ Եվ, երևի, պատճառն այն է, որ թարգմանչի անձը, իր ներքնաշխարհով, զգաց-

մունքներով և վերաբերմունքով. բացակայում է իր իսկ աշխատության մեջ: Մինչդեռ, ինչպես նշում են գրականագետները, թարգմանությունը համաստեղծագործություն է: Թարգմանիչը և հաղթանակը տվյալ գրական ստեղծագործության համատեղ կերտողներն են: Թարգմանիչը ինչ-որ տեղ այն կարևորագույն օղակն է, որը կապում է պատմության գիրկն անցած դարերը ժամանակակից իրականության հետ: Այդ օղակի բացակայությունը նշանակում է երկի (տվյալ դեպքում՝ «Շահնամի») մեխանիկական փոխադրում X դ. Իրանից XX դ. Ռուսաստան, մի հանգամանք, որը աններդաշնակություն է ստեղծում պոեմի և այսօրվա ընթերցողի միջև:

Մեր կարծիքով, առավել հաջող է Ս. Լիպկինի «Շահնամի» որոշ հատվածների թարգմանությունը, որը կատարված է հնգանդամ յամբով, ինչպես նաև 10 և 11 վանկանի բյթերի հաջորդականությամբ: Այստեղ, չնայած թարգմանչի տաղանդին, ստեղծագործական մոտեցումը թարգմանության մեջ բացակայում է, իսկ թարգմանչի, որպես մեր ժամանակակցի, խոսքի բացակայությունը պոեմում՝ այսօրվա ընթերցողին ինչ-որ տեղ համահնչյուն է:

Իհարկե, չի կարելի առաջարկել լիովին արդիականացնել «Շահնամեն», սակայն անհրաժեշտություն է, որ ժամանակակից ընթերցողը պոեմին մոտենա այլ կերպ:

Ինչպիսի՞ն է լինելու «Շահնամի» այսօրվա թարգմանությունը, ի՞նչ սկզբունքներով է կառուցվելու: Դժվար է ասել: Այդպիսի թարգմանության ճշմարիտ նմուշ չունենք: Կարծում ենք, դրան հնարավոր է հասնել նախ՝ ձևի, ապա հերոսների այն հատկությունների ընդգծված արտահայտումով, որոնք կարող են համահնչյուն լինել ընթերցողին այսօր:

Հույս ունենք, որ թարգմանությունների ավանդաբար հաստատված չափանիշները կվերանայվեն, և կգտնվեն նոր ուղիներ՝ դասական ստեղծագործությունները ժամանակակից ընթերցողին մատուցելու համար:

ANAHIT MIKAYELIAN

TOWARDS SOME ARMENIAN AND RUSSIAN TRANSLATIONS OF «SHAH-NAME»

The translations of «Shah-Name» into different languages,

particularly, Armenian and Russian, are of considerable importance.

In Armenian literature first S. Gulzadians had dealt with some passages of the poem. In Russian literature the poem was translated by V. Zoukovsky, M. Lozinski, M. Diakonoff, S. Lipkin (some passages), and Ts. Banu-Lachouti (whole poem).

At present it is difficult to discuss the principles of the future translation of «Shah-Name». Maybe, the theory of translation shall be built via the form, or more relief picturing in hero qualities which are actual in the given period.

ՕՂՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ¹ Абулькасим Фирдоуси. «Бахрам Гур и Азаде из Шах-Наме» (Пер. М. Лозинского). Л., 1934.
- ² «Шах-Наме». Избранные места (Пер. М. Лозинского, под ред. с коммент. и статьей Ф. А. Розенберга). М.—Л: Academia, 1934.
- ³ Фирдоуси. «Шах-Наме» (Пер. Ц. Б. Бану). М., 1957.
- ⁴ «Шах-Наме» Пер. Ц. Б. Бану-Лахути. М., 1960.
- ⁵ «Шах-Наме» Пер. Ц. Б. Бану-Лахути. М., 1965.
- ⁶ «Шах-Наме» Пер. Ц. Б. Бану-Лахути. М., 1969.
- ⁷ Абулькасим Фирдоуси. Из «Шах-Наме» (Пер. с фарси В. Державина, С. Липкина). М.: Художественная литература, 1969.
- ⁸ «Шах-Наме». Поэмы (Пер. и предисловие С. Липкина). М., 1955.
- ⁹ Արուրախիմ Ֆիրդուսի, Շահ-նամե, Զոհակ Բյուրապապ ածղահակ (Բարգմ. Ս. Գյուլզադյան), Շուշի, 1894:
- ¹⁰ Ռոստոմ և Սոհրաբ (Բարգմ. Ս. Գյուլզադյան), Շուշի, 1893:
- ¹¹ Սիավուշ (Բարգմ. Ս. Գյուլզադյան), Շուշի, 1893:
- ¹² Արուրախիմ Ֆիրդուսի, Շահ-նամե (Բարգմ. Ս. Ումառյան), Երևան, 1975:
- ¹³ Արուրախիմ Ֆիրդուսի, Ռոստոմ և Սոհրաբ Վեպ «Շահ-նամե»-ից: Երգի-ծանր: (Բարգմ. Գ. Ասատուր), Երևան, 1934: